

## ՄԵԺ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻ ՄԻՋԵՒ ԳԺՏՈՒԹԻՒՆԸ:

## IV.

(Շարունակություն):

363 թուին Բարսեղը իւր կամքին հակառակ կետարիայի էգզարխոս<sup>1)</sup> Եւսեբիոսից քահանայ ձեռնադրուեց: Եւսեբիոսը ժամանակակից այլ եպիսկոպոսների պէս խոստովանում էր եկեղեցու պաշտօնէութեան համար ընտրելագոյն երկաստարգների տաղանդից օգտուելու անհրաժեշտ կարևորութիւնը: Աստուածաբանութեանը շատ սակաւ տեղեակ մի եպիսկոպոսի համար, որպիսի որ էր Եւսեբիոսը, որի ընտրութիւնը սաստիկ գիմնադրութիւնների էր հանդիպել, շատ և շատ կարևոր էր ունենալ իւր մօտ Բարսեղի պէս մի խոհական և բեմքոտայ մարդ: Բայց նոցա մէջ շուտով տարածայնութիւններ ծագեցին: Եւսեբիոսը իրանից գերազանց քահանայի սուաջ նսեմացաւ և ոչստեղ գուցէ մարդկային բնաւորութեանը յատուկ նախանձը գործեց: Եւսեբիոսը այնքան հեռուն գնաց՝ որ մինչև անգամ Բարսեղին զրկեց այն քահանայութիւնից՝ որ ինքն էր նորա զգին կապել: Եթէ Բարսեղը աղնուաբար չը հեռուէր իւր բարեկամ Գրիգորի խրճրդին, և այժից հեռանալու մաքով խոյս չը սար գէպի Պոնտական մեհակեցութիւնը, ուր սաթամանակ մի ընկերայել էր նորան և ինքն Գրիգորը՝ կարելի էր որ մի կատարեալ հերձուած սուաջ գար: Գրիգորը վերագառնալով Պոնտասից եռան-

1) Հնումն Հռովմէական Արևելեան կայսրների տեղակալները հեռուոր հպատակ ազգերի մէջ էգզարքոս (exarchos) էին կոչվում: Գոթարերարար՝ այլազգի բայց կրօնակից եկեղեցու գլուխ արքեպիսկոպոսներն էլ, որ ընդհանուր պատրիարքի բարձրագոյն իրաւասութեան տակ կառավարում էին իրանց վիճակուած եկեղեցին՝ կոչվում էին էգզարքոս: Այս առմամբ՝ ուսաց Սրբազնագոյն Սինոդի բարձրագոյն իրաւասութեան տակ Կովկասեան յունարաւան ազգերի եկեղեցին կառավարող արքեպիսկոպոսը կոչվում է Արաստանի և Իմերեթի էգզարխոս: Հայ թարգ:

գագին աշխատեց զայրացած եպիսկոպոսին իւր կարեվէր խօցուած քահանայի հետ հաշտեցնել: 364 թուին վերջացաւ Յօրհանոսի 2), կարճատև թագաւորութիւնն և արիոսական Վաղէսի գահ բարձրանալովը Եւսեբիոսի գրութիւնը վտանգաւոր դարձաւ: Իւր խորհուրդների և փառվաների մէջ իրան օգնելու համար Եւսեբիոսը Գրիգորին յաճախ իւր մօտ էր կանչուում: Գրիգորը սիրով պատասխանում էր, որ ինքն իւր համար մեծ պատիւ է համարում այդ հրաւերները, սակայն իւր բարեկամ Բարսեղի վերաբերութեամբ Եւսեբիոսի գործողութեան եղանակին չէր կարողանում հաւանել: «Ինձ պատիւ՝ և նորան անարգանք ցոյց ապրով՝ գրում է նա Եւսեբիոսին, զու միտս ես ձգում այն մարդը, որ մի ձեռով մէկի գլխին դարկելով՝ միւս ձեռով շոյում է նորա երեսը, կամ որը ամբոցներով տան հիւնը՝ միևնոյն ժամանակ պատերը քանդում է: Եթէ քս աւաջին ես մի նշանակութիւն ունեմ խնդրեմ՝ Բարսեղի հետ հաշտուես: Այդ շնորհը մի զլանար ինձ: Եթէ դու նորա հետ յարգանքով վարուես՝ նոյնը և նորանից կը գանես»: Ինչպէս զժուար չէ ենթագրել՝ Եւսեբիոսը այս նամակից վիրաւորուեց: Նա բաւական յարգական չը համարեց երիտասարդ գաւառացու այդ տեսակ սճը: Գրիգորը մեծ վստահութեամբ, գիտակցաբար և իւր արժանիքը գնահատելով՝ պատասխանեց թէ, բարեկամի ազատութիւնը թշնամու վրէժինդրութիւնից շատ լաւ է: Նա ինքնահաճ ամբարհաւանութեամբ չէր գրում, այլ գրում էր որպէս քրիստոնեայ փիլիսոփայ: Եւ եթէ Եւսեբիոսը նայում էր այդ նամակին որպէս թէ մի ծառայ լինէր գրողը՝ որ իւր սիրոջ երեսին մտիկ անելու վստահութիւն պէտք է չունենար, այն ժամանակ Գրիգորը պատրաստ էր իւր անձը գանակածութեան ենթարկել և չը լայ: Այս զղջումը ընդունեց Եւսեբիոսը, և եկեղեցու անհրաժեշտ կարիքից ստիպուած՝ ներեց Բարսեղին: Գրիգորը գրաւոր հաղորդեց իւր բարեկամին թէ նա շուտով կը ստանայ իւր եպիսկոպոսից սիրալիր նամակ: Եւ նախազգուշացրեց նորան մեծահագի հեղու-

2) Միքայէլ Ասորի երես 171 կոչում է Յօրհանոս, իսկ երես 172՝ Յօրհանոս, Հայ թարգ.:

Թեամբ կանխել այդ նամակին, խոստանալով որ, եթէ կամենայ՝ ինքն մինչև Կեսարիայ կուղեկցի նորան և այնտեղ ճշմարտութեան համար պայքարների մէջ կօգնի: Գրիգորը եպիսկոպոսին էլ գրեց. «Եթէ միայն հաճելի կը լինի քեզ, կը գամ և քեզ հետ միասին կաղթեմ: քեզ հետ միասին կը մաքառեմ, քեզ հետ կը ծառայեմ և, ինչպէս խիզախ մանուկները խրախուսում են քաջարի ըմբիշներին, ես էլ իմ հանդիսաւոր ներբողներով կը խրախուսեմ քեզ»: Այս բաներում Գրիգորը շատ ազնուութեամբ գործեց:

Յիրաւի Բարսեղը 365 թուին Կեսարիա վերադարձաւ և, հինգ տարուց յետոյ կարծես քաղաքի իսկական եպիսկոպոսը լինէր, իսկ Եւսեբիոսը միայն անունն էր կրում իւր վերայ: Կեսարիայում Բարսեղը այնպիսի դիրք ստացաւ որ նորան հնարաւորութիւն էր տալիս եկեղեցու գործերը իւր կամեցածի պէս վարել: Նա էր որպէս մի «առիժ պահող»: Եւսեբիոսի համար բոլորովին անհրաժեշտ որ դառնալով աւանց վիրաւորելու իւր եպիսկոպոսի դիւրազգաց պատուասիրութիւնը, միմիայն եպիսկոպոսական աթոռին մեծ ծառայութիւն էր մատուցանում: Մի սովի ժամանակ նա գերազանցեց բարերար գործունէութեամբ և, առնաբար պաշտպանեց Նիկիական դաւանութիւնը արիոսական Վաղէս կայսրի դէմ:

370 թուին լիսիւնացուց Եւսեբիոսը: Բարսեղը այդ ժամանակ 41 տարեկան էր և՛ (եթէ այդ նորա իսկական նամակն է) նա իսկոյն դիմեց Գրիգորին՝ խնդրելով որ օգնէ իրան մեսրապօլոսական աթոռի համար մի արժանաւոր յաջորդ ընտրելու գործում: Այգպիսին, գրում է նա նորան, արդէն կայ ի նկատի, և Գրիգորին լաւ յայտնի է: Այստեղ նա, հաւանական է որ, բացի Գրիգորից ոչ որ ի նկատի չունէր<sup>1)</sup>: Գրիգորը մերժեց այս խնդիրը:

1) Այժմ՝ ընդհանրապէս ենթադրում են որ, Բարսեղի մէջ թղթերի տպուած նամակը իսկապէս Անդրանիկ—Գրիգորի (Աստուածաբանի հօր) նամակն է Սամոսատի Եւսեբիոս եպիսկոպոսին գրած: XLI-րդ նամակում որ Անդրանիկ—Գրիգորը գրել է Կեսարիայի եկեղեցուն՝ նա յայտնում է խաղաղութիւնը դրդուած, սակայն ապաւինում է առատաձեռն Աստուծոյ ազատութեանը և իւր ծաղկեալ ալիքի ազգեցութեանը, Հեղ.

բայց յետոյ էլի նոր նամակ ստացաւ Բարսեղից, որով վերջինս յայտնում էր թէ փասնգաւոր հիւանդ է, ըզձակաթ է իւր բարեկամին տեսնել: Գրիգորը խորին կերպով զգայուած՝ պատրաստ-վում էր ճանապարհ ընկնել՝ երբ յանկարծ ի զարմանս իւր իմա-նում է, որ Բարսեղը վայելում է իրան յատուկ քաջաւարջութիւնը: Գրիգորի հոգու մէջ ծագեց այն միտքը թէ, Բարսեղը իւր ներ-կայութիւնը ցանկանում է, որ իւր օգնութեամբ կարողանայ փա-վագին հասնել—եպիսկոպոս ընտրուել: Գրիգորը Բարսեղին մի խիստ յանդիմանական նամակ գրեց, պախարակելով նորան այն բանի համար, ինչ որ ինքն համարում էր փառասիրական նպատակ-ների երևոյթ և խորհուրդ տուեց նորան յուզուած քաղաքից հեռանալ: Այնուամենայնիւ ինչ որ կարող էր՝ իւր բարեկամի օգ-տին արեց նա իւր հօր կողմից երկու թուղթ գրելով մէկը Կե-տարիացի հոգևորականութեանը, իսկ միւսը՝ Ժողովրդին: Անգրա-նիկ-Գրիգորը չը նայելով իւր խոնարհեալ տարիքի անկարողու-թեանը, այս գործով այնպէս եռանդագին հետաքրքրվում էր, որ անձամբ Կետարիա գնաց և երբ Բարսեղը ընտրուեց՝ այնքան ուրա-խացաւ՝ որ տուն վերադառնալիս իրան մի քանի տարով երիտասար-գացած էր համարում: Աթէ զառամեալ եպիսկոպոսի այսպիսի անձ-նուէր մասնակցութիւնը չը լինէր, գուցէ և անհնար լինէր գլուխ բերել Բարսեղի մեծ պաշտօնը: Չեռնադրութեան համար երեք եպիսկոպոսի ներկայութիւն պէտք էր, իսկ մինչև նորա ժամա-նելը՝ նորան ձեռնադրելու պատրաստ միայն երկու եպիսկոպոս կար Կետարիայում:

Բարսեղի կեանքի մէջ այս նշանաւոր վայրկենում, նորա ձեռ-նարկած միջոցներից պատճառուած թիւրիմացութիւնը մեծ Կապա-գովկեցիների որտագին և անձուկ բարեկամութեան սոււային խաչն եղաւ, և այդ լուրը էր: Գրիգորին թուում էր թէ Բարսեղը աղ-նուամտութեամբ չէր գործում, իսկ Բարսեղը մտածում էր, որ իւր բարեկամը դէպի ինքն անտարբերութեամբ է վերաբերվում, թէ և կարծիք չը կայ որ Բարսեղը չէր ընտրուիլ՝ եթէ երկու Գրի-գորների (հօր և որդու) անդուլ ջանքերը չը լինէին: Գրիգորը շնորհաւորական նամակ գրեց նորան, բայց ներկայ չը գտնուեց

անձամբ, որովհետև վախենում էր թէ միգուցէ Բարսեղի թշնամիներն ու բանասարկուները ասեն որ, նոր եպիսկոպոսը իրան իւր կուսակիցներով է շրջապատում: Բարսեղը միանգամայն ջնդուանեց այս պատճառաբանութիւնը, և ազգեց Գրիգորին թէ, նա ակներև է, որ իւր գործովը չէ հետաքրքրվում: Գրիգորը ահաճութեամբ պատասխանեց. «Ի՞նչպէս ես կարողանում ասել թէ, քո գործը իմ համար լքեալ հաւնձք է, սիլ գու, աստուածային և նուիրական գլուխ: Այդ ի՞նչ խօսք է դուրս թուշում քո բերանից, և ի՞նչպէս ես համարձակուում այդպէս խօսել: Քո խելքը այդ ուղղութեամբ ինչպէս կարողացաւ ընթանալ—թաննքն է գրել այդ— թմուղթն է ընդունել: Ո՛հ, սէր էք դուք, զրոյցներ, Աթէնք, առաքինութիւնք, և գրական վաստակներ: Քո գրած այդ բաներով դու ինձ համարեա եղբերեզակ ես դարձնում: Ո՛վ դու, որ աշխահի աչքն ես, ինձ մի՞թէ չես ճանաչում: Ո՛վ դու, մեծ ձայն և փող, հանդիսարանդ ճոխաբանութեան: Եւ մի՞թէ քո գործերը կարող են իմ աչքին նշանակութիւն չունենալ: Եթէ Գրիգորը քո առաջին պատիառ չը մնայ, մի՞թէ կարո՞ղ է լինել մի սքիշը, որ՝ աշխարհիս մէջ որևէ մէկի առաջին պատիառ մնար: Տարուայ եղանակների մէջ գարունը մի հատիկ է, երկնքի աստղերի մէջ՝ արեգակը՝ ամեն ինչ ընդգրկող է երկինքը և այդ բոլորի մէջ՝ մի ձայն— և այն հէնց քանն է, եթէ միայն առհասարակ ես կարող եմ գատաւոր լինել այդ գործում և եթէ (ինչեր եմ մտածում) իմ սէրը գէպի յեզ չէ սխալեցնում ինձ»:

Բայց և շուտով Գրիգորը առիթ ունեցաւ տարջուցանել՝ որ իւր խօսքերը անկեղծ են, որովհետև լսելով թէ Բարսեղը քաղաքական իշխանութեան հետ վէճի է բռնուել և դժուարութիւնների մէջ է, շուտով նամակ գրեց և խտտացաւ նորա մօտ գնալ: Բարսեղը Գրիգորին աւագերէցի պաշտօն առաջարկեց կեսարիայում, բայց Գրիգորը մերժեց:

Մինչ այս մինչ այն՝ աւելի ևս վատ բան էր նախասպարաւովում: 370 թուին արիստական կայսր Վաղէսը իւր յառուկ տեսակէտով՝ կապագովիկան բաժանեց երկու նահանգ և այս քաղաքական բաժանմանը չը նայելով՝ Բարսեղը ի դուր տքնում էր եկե-

ղեցական միութիւնը պահպանել իւր թեմի մէջ: Երկրորդ կէտի մայրաքաղաքը դարձաւ Տիանա քաղաքը և նորա մնալաւ եպիսկոպոս Անթիմոսը իւր նախկին մետրապօլիի հետ միանգամից տարածայնութեան մէջ մտաւ: «Հոգևոր զաւակների, հոգւոյ, հաւատոյ բանի» մասին իւր համեմած պատճառաբանութիւններով (որ ազահութեան համար լաւ պատրուակներ էին) նա այնքան հեռուն գնաց, որ Սասիմայի լեռնային կրճից անցնող Բարսեղի օգտին սահմանուած եկամուտները սկսեց յախշտակել: Իւր սեպհական գործածութեան համար յախշտակեց նոյնպէս իւր նախկին մետրապօլիի ջորիները: Իւր այս փարմունքը արդարացնելու համար ստում էր. «չարափառներին պետք չէ հարկ վճարել»: Այս պատճառով էլ Գրիգորը կճու կերպով նկատեց, որ «նա է չարափառը՝ ով ուրիշին վիշտ է պատճառում»:

Իւր մետրապօլիական սեպհական իրաւունքը ամրապնդելու համար Բարսեղը փոքր քաղաքների թուի համեմատ իւր յիսուն քորեպիսկոպոսների թուին մի քանի նորերն էլ աւելացրեց: Այս քորեպիսկոպոսները ստիտական բարեկարգիչներից աւելի բարձր դիրք չունէին և կարգվում էին հասարակ քահանաներից: Նահանգների բաժանման պատճառով երկու նորակազմ թեմերի սահմանի վերայ մէկուսի ընկած էր մի անշուք քաղաք, որի պատճառով միմեանց գէմ՝ վիճում էին Անթիմոսն ու Բարսեղը: Այդ նոյն ինքն Սասիմա քաղաքն էր, որ Տիանայից՝ 50 և Նազիանդից՝ 36 վերստի վերայ էր գտնվում մի քարքարոտ և խոպան վայրում: Այդ վայրը անջրգի էր և զուրկ բուսականութիւնից, իսկ քաղաքը խեղճուկ ու փոշոտ բայց երեք ճանապարհների միացման կէտում գտնուելով՝ անհաստատաբնակ ազգաբնակչութեան պատճառով անտանելի կերպով աղմկալից էր: Քաղաքի բնակիչները ջորեպաններ և նօգհէճ վաճառականներ էին: Իսկապէս ձիեր փոխելու մի կայարան էր, և մէջը բացի փոշուց, աղաղակից, ամենատեսակ ժխորից, ամեն տեսակի գործակատարներից և ձիերի սարքերից ուրիշ ոչինչ չը կար: Յաւելացնենք և այն՝ որ այնտեղ հազիւ մի վայր գտնուէր ուր հնար լինէր գոնէ ամենասակաւ հոգևոր ազդեցութիւն գործել: Իսկ եկամուտները այնքան նուազ

էին, որ տեղական եպիսկոպոսը անկարող կը լինէր համարձակօրէն իւր հովուական և բարեգործական սովորական պարտականութիւնները հնգալ: Եթէ ընդհանրապէս այստեղի համար եպիսկոպոս պէտք էր լինէր, միմիայն Բարսեղի մետրապօլիտական իրաւունքը՝ նորա Տիտիանական ստիկի գէմ՝ պաշտպանելու համար, այն ժամանակ այստեղ գուցէ մի խիտտ ներկուու, և կարգապահ քահանայ պիտանի լինէր, որ կարողանար այն անհաստատաբանակ ազգաբնակութեան մէջ քահանայագործութիւն անել: Սակայն յամենայն գէպս, ճարտարաբանութիւնը, նուրբ կրթութիւնը, և աստուածաբանական խրթնութիւնները բոլորովին ապարդիւն կը լինէին այսպիսի վայրում:

Բայց ընդհակառակն այդ իսկ տեղում Բարսեղը եպիսկոպոս կարգեց իւր հասակակից և համապատիւ, ճարտարաբանութեամբ և ուսմամբ իրանից գերազանցող, ամեն բանում իւր անձնուէր բարեկամ իւր բոլոր ծանօթներից աւելի շնորհալի, և աւելի կրթուած մարդուն՝ որ իրան ազատել էր Աթէնքում՝ նորեկների վերաբերութեամբ ուսանողներին յատուկ չարածճիւղութիւնից 1), վիճաբանութեան մէջ յաղթուելուց 2), սուսջնորդել էր նորան իւր խորհուրդներով—մասնակցել էր նորա ուսումնական պարամունքներին, նորա վստական մենակեցութեանը, հաշտեցրել էր իւր զայրացած եպիսկոպոսի հետ, և այդ ամենից աւելի՝ Կեսարիայի մետրապօլիտական աթուռի համար նորա ընտրութիւնը ապահովելուն գործակցել էր: Սակայն Բարսեղը իւր կողմից Գրիգորին եպիսկոպոս էր կարգել այն մեկուսացեալ տեղի համար, որին ինքն

1) Բազանքի փորձութիւնն՝ որի մասին յիշուած է արդէն: Հայ թարգ.:

2) Հայերի հետ վիճաբանութիւնն է ակնարկում: Ուր Բարսեղը երբ պէտք է յաղթուէր՝ Գրիգորը օգնութեան էր հասել: Հետաքրքիր է այս մրցման գէպքը նախ՝ որ ապացուցանում է թէ Հայք չորրորդ դարուց արդէն հետամուտ էին նոյն ժամանակի լուսաւորութեան և երկրորդ՝ որ այնքան յառաջ էին գնացած՝ մինչ ոչ միայն մրցում էին Բարսեղի, պէս մարդոց հետ, այլ ընծայելով Պարոյր Հայկազնի պէս հանրահռչակ գիտնական, իրանց պատիւը Աթէնքինն էին համարում: Հայ թարգ.:

Գրիգորը գտան երգիծանքով անուանում էր իւր «ամենախառնուր Սասինա»: «Ահա՛ զայրացած բացազանչում է Գրիգորը՝ ինչ եղաւ Աթէնքը՝ ինչ դուրս եկաւ մեր միտին ուսումնական պարապմունքից, մեր բնակակցութիւնից, մեր հրաշալի բարեկամութիւնից և մեր՝ իրար արած խոստումներից: Այդ բոլորը ցնդեց որպէս վաշի: Աւելի լաւ էր, որ ես աղաւինէի վայրի գազաններին: Ինձ թուում է թէ նոցա վերայ աւելի յոյս կարելի էր գնել:»

Իսկ Բարսեղը ինչից ստիպուած Գրիգորին Սասինայի եպիսկոպոս նշանակեց: Արդարացնել գործողութեան եղանակը դժուար է. Եթէ մի այլ մարդ մեղադրուէր այդ գործում՝ գուցէ հնար լինէր բոլորովին անբարեացակամութիւն անուանել. բայց ի նկատի ունենալով երկու բարեկամների ամենալաւ յարաբերութիւնը, անբարեացակամութեան ոչ մի առիթ չէր երևում: Եթէ Բարսեղը գիտենար թէ այդ այգպէս խիստ և վիրաւորական կարող է լինել իւր բարեկամի քնքոյշ և զգայուն բնութեան համար, թէ այգպէս կարող է հանգցնել նորա մէջ վառուող կրակը, ընկճել նորա հոգին, և եկեղեցու համար անօգուտ դարձնել նորա ձիրքերը, նա այդ անյաջող ընտրութիւնը չէր էլ անիլ, որը կարծէք բնաւ չէր համապատասխանում Գրիգորի ոչ կրթութեանը, և ոչ իսկական բնաւորութեանը, որ և այս պատճառով իսկ նոյն ինքն գործի համար ևս ապարդիւն կարող էր լինել: Յամենայն գէպս, այս պաշտօնը ծանրացել էր Գրիգորի հոգու վերայ որպէս մի վատ ուրուական և խանգարել էր նորա հոգեկան դուրսութիւնը: Ինչից ստիպուած Բարսեղը այգպէս վարուեց՝ յայտնի չէ: Գուցէ նա մի սրտչեալ նպատակ ունենալով ի նկատի՝ հաշուի չէ գրել միւս ամեն բաները, և ուրիշ շատ բարձրագոյն մարդոց նման արեց այն՝ ինչ որ իւր հայեացքով իւր թեմի բարւոյն համար իւր կողմից օգտակար գտաւ: Բայց նա կամայ թէ ակամայ հարուած էր հասցրել իւր բարեկամի բարօրութեանը, այն բարեկամի՝ որ նրան շատ էր յարգում և որի վերայ ինքն յոյս էր դրած եղել, և որին ինքն իւր ունեցած բոլոր լաւ բաներով պարտական էր: Գէպի Գրիգորը Բարսեղը նախանձ տածում էր արդեօք: Չէ՞ր կամեցել արդեօք Գրիգորին պատժել՝ որ նա իւր ընտրութեան ժամանակ ներկայ չէր գտնուել: Կամ՝

Թէ վարուեց որպէս բարձրագիր աստիճանաւոր, որ մետրապօլիս  
 և իւր ստորագրեալ յիսուն եպիսկոպոսաների էզգարիս դառնալով  
 անասրբերութեամբ էր վերաբերում գէպի իւր նախկին բարե-  
 կամները: Գորա բոլոր ի հարկէ անարոշ ենթադրութիւններ են  
 և միւս կողմից հաւանական է նոն, որ կարող էին լինել այլ  
 բարձր շարժառիթներ, որոնք մենք չենք կարողացել նկատել և,  
 որոնք եկեղեցու այն տազնապալից և վտանգաւոր ժամանակի  
 օրուայ կարիքից են յառաջ եկած: Այնուամենայնիս, մարդկային  
 տեսակէտից առնելով բոլորովին հասկանալի է որ այս վարմունքը,  
 ինչպէս Գրիգորն է ասում, իւր կեանքի այլ բոլոր արկածներից  
 աւելի է խախտել նորա փիլիսոփայական և քրիստոնէական անգոր-  
 բութիւնը: Նա այդ բանի վերայ նայում է որպէս ամենայն ինչ  
 փոփոխողի վերայ, որ զրկել էր նորան իւր ակնկալած բոլոր յոյ-  
 սերից: Գրիգորի նամակների շատ կտորները պարզ ցոյց են տալիս  
 իւր բարեկամի գէպի ինքն այսպիսի վարմունքի համար՝ իւր զգաց-  
 մունքի լարուած լինելը: «Արդեօք դու» դեռ երկա՞ր ժամանակ ինձ,  
 որպէս անուս» գւեհիկ ընկերատեսայ և կեանքի համար անպէտք  
 մարդու պէտք է անարգես» և այս այն պատճառով միայն՝ որ ես  
 յանգգնեցի պատշաճաւոր կերպով վերաբերուել գէպի այն պաշ-  
 տօնը՝ որ ստացել եմ՝ քեզանից: Ամենածիծաղելին կամ ցաւալին  
 այս գէպը քում է այն՝ որ անարդարութեամբ է վարուած ինձ հետ  
 և էլի ինձ են նախատուան: Այնուհետեւ նա Բարսեղին գրում է որ  
 եթէ նա կամենում է կուռել Անթիմոսի հետ՝ թող ինքն կուռի  
 Գրիգորը ինքն վարչական նախապատուութեան համար այս չարա-  
 բաստ կռիւը վարել չէ կարող:

Բայց Բարսեղը չը կամեցաւ իւր միանգամ արած քայլից յետ  
 կենալ: Նա հաղիանդ գնաց Գրիգորին ձեռնադրելու և վերջինս  
 զգալով որ այլ ևս սղատ և ինքնակամ չէ և ի հարկէ այս ամենի  
 մէջ Բարձրեայ աճը տեսնելով՝ վերջապէս զիջաւ թէ և այնուամե-  
 նայնիւ իրան եղած առաջարկութիւնը ակամայ էր ընդունում: Գրի-  
 գորի հօր կառուցած եկեղեցում Բարսեղը «Գրիգորին յառաջ  
 բերեց և ձեռքից բռնելով իւր կողքին նստացրեց: Յետայ օժեց,  
 հագցրեց եփուքը (եմփորան) գրեց նորա գլխին սաղաւարտը»

մտայնորէն սուրբ սեղանին, մատոյց սուրբ պատարագը, Ա. Հոգուն նուիրագործեց նորա ձեռքերը, և տարաւ դէպի սրբարանը՝ որ նորան սրբերի եպիսկոպոս գարձնէ»<sup>1)</sup>: Ա. յատեղ, Բարսեղի և իւր հօր ներկայութեամբ Գրիգորը քարոզ խօսեց: «Մի անգամ ևս, ասաց նա, իջան իմ վերայ օրհնութիւն և սուրբ հոգի, և միանգամ ևս տրտում և տխուր ուղեորում եմ շահատակելու համար»: Իւր այս բարձրանալու պատճառը, աւելացրեց նա, ոչ թէ իւր յօժարութիւնն էր, այլ ստիպմունքը: Բայց և միևնոյն ժամանակ անձնանուէր հոգւով իւր «կամակորութիւնը, պակասամուտութիւնը» դատապարտում է և իւր բարձրապատիւ բարեկամից շնորհակալ է լինում նորա բարութեան և անձնուիրութեան համար, որովհետեւ չէ կամեցել նա որ իւր տաղանքը գետնի մէջ թաղուած մնայ: Ա. յուհետեւ Բարսեղին գրեց նա որ, եթէ ուրիշ բան էլ չը լինի, այդ ամենից նա գոնէ այն օգուտը ստացաւ, որ սովորեց այնուհետեւ իւր յոյսը, ոչ թէ իւր բարեկամների, այլ Աստուծոյ վերայ դնել:

Գրիգորը ուժեղ բնաւորութեան տէր մարդ չէր: Նորա վեհերոտ զգայունութիւնը, նորա հակումն դէպի մենակեցութիւնն ու վերացականը և նորա անընդունակութիւնը անմիջական ձնշմանը ընդդիմադրելու, իրանից զօրեղ և իշխող բնաւորութեան դէմ մնալուելիս՝ նորան անզօր էին գարձնում: Չանձրացուցիչ չեմուշումից ազատուելու համար յանձն առնելով ձեռնադրուել նա այնպիսի թուրութիւն ցոյց տուեց՝ որի համար ապագայում երկար ժամանակ աւազում էր: Ա. յգ պատճառով էլ մեղադրում էին նորան որպէս փոփոխամիտ որ, և ապագայումն էլ ենթարկուեց շատ անախորժութիւնների: Նորա խորին կերպով վշտացած հոգին մխիթարելու համար իզուր եկաւ նորա մօտ Գրիգոր Նիւսայցին: Չեւնագրուելուց յետոյ իւր ընկճուած հոգին կազուրբելու համար նա դէպի իւր սիրած մենակեցութիւնն քաշուեց, իսկ վերագարձից յետոյ նա իւր Աստիման քաղաքը գնաց թէ ոչ՝ յայտնի չէ, միայն

1) Հրէական լեզուի այս բառացի գարձուածքը յետոյ զանազան թիւրիմացութեան պատճառ գարձաւ: Հեղ.

գիտենք որ այնտեղ նա ոչ մի ձեռնադրութիւն չը կատարեց: Նա երբէք չը կամեցաւ և իւր բնութեան էլ համապատասխան չէր կռիւ վարել Անթիմոսի հետ՝ մանաւանդ որ, այդ շատ անախորժութիւններ էլ պէտք է պատճառէր նորան: Անթիմոսը Տիանեան թեմի ուրիշ քաղաքների շարքում՝ Նազխանդ էլ գնաց՝ որպէս թէ Անգրանիկ Գրիգորին այցելելու, բայց նպատակն իսկապէս էր Սասիմայի նորահաստատ եպիսկոպոսին համոզել՝ որ ընդունի իւր մետրապօլիտական գերիշխանութիւնը: Այս նորան չը յաջողուեց, և նա գայրացած՝ մեզագրեց Գրիգորին Քարսեղականութեան՝ մէջ: Այնուհետև նա համոզեց նորան որ Կեսարիայի և Տիանիայի աթոռների միջև միջնորդի դեր կատարէ. Գրիգոր այս մասին էլ յաջողութիւն չունեցաւ, որովհետև Բարսեղը վճռադատար մերժեց Անթիմոսի կողմից սանձագութիւնները: Վերջապէս Գրիգորը զգալով որ անհնար է Սասիմայի պէս տեղում՝ օգտակար լինել, նորից խոյս տուեց բլուրների միջև առանձնացած, և իւր սիրած մենարանը: Նա մերժեց նաև իւր հօր խնդիրը և չը կամեցաւ գնալ իւր եպիսկոպոսութեան քաղաքը՝ «որ տղմի մէջ չը խեղդուի»: Սակայն ընդունեց Նազխանդում մնալու համար իւր հօր խնդիրը և ինչպէս ինքն այլարանօրէն ասում է, զօրեղ, բայց վաստակած (զագրած) արծուի թեւերին նեցուկ լինելու համար: Վազէսի արիստական բռնութիւնները ստիպել էին նորա զաւաճեալ հօրը իւր մօտ օգնականներ ունենալ «հաւատոյ պատնէշ Կապագոպիկիայի ոյժը ստուարացնելու համար: 372 թուին» յիրաւի, նա Կերազարձաւ իւր հայրենի քաղաքը և իւր առաջին քարոզում խոստացաւ հարթել այն խոչնդոտները, որոնք հոգևոր երջանկութեամբ զուարճանալը արգելում էին: Նա խոստովանում էր թէ, իւր կեանքի անյաղթելի առաջնորդողը նախախնամութիւնն է, որին պարտաւոր էր զօհել իւր անձնական հակումները և այս ժամանակից սկսեց կանոնաւորապէս գործել որպէս իւր հօր օգնական եպիսկոպոս՝ միայն հրաժարուեց նորա յաջորդը լինել: Որովհետև Բարսեղը միմիայն իւր բարեհաճ կամքով էր նորան Սասիմայի եպիսկոպոս նշանակել, առանց իւր միւս ստորագրեալ եպիսկոպոսների հետ խորհրդակցելու և առանց ժողովրդի ցանկութիւնը աչքի առաջ ունենալու, ուստի

և իւր բարեկամի բազմի այգւղիսի գարձուածքին ներողամտութեամբ էր վերաբերվում: այնպէս որ Գրիգորը իսկապէս առանց որոշեալ ակթուի եպիսկոպոս էր:

Մեծ բարեկամների այս բոլոր վիրաւորական տարածայնութեանց ժամանակ ուրախալի էր նկատել՝ որ երկուստեք փոխադարձ ներողամտութեամբ՝ ժամանակը բուժիչ խորհուրդներ յառաջ բերեց: Խորարմատ էր նոցայ բարեկամութիւնը, Գրիգորը միշտ պատրաստ էր իւր բարեկամին օգնել և միանգամ էլ մի մեծամիտ վանականի հակառակ հրապարակով պաշտպանեց Բարսեղի ուղղափառութիւնը: Վանականը մեղադրում էր Բարսեղին Ս. Հոգւոյ աստուածութեան վերաբերութեամբ՝ մոլորութեան մէջ: Վանականը լսել էր Բարսեղի քարոզը՝ ուր նա խօսել էր Հօր և Ողբոյ մասին Ս. Հոգւոն առանց Ս. Կրօն-անունը տալու: Գրիգորը Ս. Երրորդութեան երրորդ անձի վերաբերութեամբ իւր բարեկամի հաւատքը փճուողաբար սարսուցեց և իւր քարոզի մէջ յառաջ բերեց այդ զանցառութեան շարժառիթը: Բայց Բարսեղը վիրաւորուել էր Գրիգորի այս գէպքը յիշեցնող մի նամակից: Բարսեղին թուում էր որ Գրիգորը շատ վեհերոտ և անարուեստ կերպով է պաշտպանել նորան: «Եթէ երկար բարեկամութիւնը գրում է նա՝ բաւական չէ համոզել իմ եզբայրակիցներին՝ որ իմ հայեացքները լմբւնեն» ինչ շահ մի նամակից: Սասնայի եպիսկոպոսի անսովոր խաղաղասիրութիւնն ու ներողամտութիւնը ի վերջոյ կարող եղան նոր բարգութիւններն ու տարակուսութիւնները հեռացնել և Բարսեղը իւր բոլոր դժուարութիւնների ժամանակ օգտուեց իւր անձնուէր բարեկամի գործակցութիւնից:

(Մարտի 1-ին)

Յ. Վ. Մ.